ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրենի Ժ/Պ Ս. Ավանեսյան
«_____» _____2025թ.

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ–ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Հասարակագիտություն*

ԴԱՍԱՐԱՆ *7* **ԿԻՍԱՄՅԱԿ** *I, II* **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ** *2025-2026* **ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ** *34* (տարեկան) *1* (շաբաթական)

ԴԱՍԱԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Հասարակագիտություն*

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ *Զանգակ* **ՀԵՂԻՆԱԿ** *Կարինե Հարությունյան, Հայկուհի Բարսեղյան, Նարեկ Գալստյան, Արաքս Մանուչարյան, Տարոն Սիմոնյան*

ՈՒՍՈՒՑԻՉ *Մերի Դանիելյան*

Քննարկվել, հավանության է արժանացել մեթոդմիավորման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____

Մեթոդմիավորման նախագահ _____ *Մերի Դանիելյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Տնօրենի տեղակալ _____ *Արաքսյա Առստամյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

№	ԴԱՍԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ	ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ	ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	ԳՐՔԻ ԷՋԸ	ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ			ԺԱՍԿԵՏԸ
					ԸՆԴ	ՏԵՍ	ԳՈՐԾ	
ԹԵՄԱ 1	Մարդ-բնություն 3 ժամ							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Սովորողները կիասկանան բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը: Օրինակների միջոցով կներկայացնեն բնության և հասարակության փոխկախվածությունը:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում: Բացատրի առողջ և անվտանգ կենսակերպի կանոններն ու բաղադրիչները: Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:							
1	Մարդը որպես բնության մաս: Մարդու պահանջմունքները	Նկարագրի բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը: Ներկայացնի մարդու գործունեության ազդեցությունը բնության վրա: Ներկայացնի մարդու գործունեության արդյունքում ձևավորված պահանջմունքները և կարողանա բացատրել պահանջմունք հասկացությունը:	Նկարագրում է բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը: Ներկայացնում է մարդու գործունեության ազդեցությունը բնության վրա: Ներկայացնում է մարդու գործունեության արդյունքում ձևավորված պահանջմունքները և կարողանում է բացատրել պահանջմունք հասկացությունը:	4-9 10-14	1	1		
2	Մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան	Նկարագրի մարդ-բնություն հարաբերությունները բնական միջավայրի հավասարակշռության համատեքստում: Օրինակների միջոցով ներկայացնի մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան	Նկարագրում է մարդ-բնություն հարաբերությունները բնական միջավայրի հավասարակշռության համատեքստում: Օրինակների միջոցով ներկայացնում է մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան	15-19	1	1		
3	***Ամփոփում 1 (կարճ պատասխաններով հարցեր, քարտային աշխատանք)***	Կրկնի առաջին բաժնի թեմաները,ամփոփի ձեռք բերած գիտելիքները: Համեմատի,վերլուծի, քննարկի իրադարձությունները, դեպքերն ու փաստերը:	Կրկնում է առաջին բաժնի թեմաները,ամփոփում է ձեռք բերած գիտելիքները: Համեմատում է,վեր է լուծում, քննարկում է իրադարձությունները, դեպքերն ու փաստերը:		1		1	
ԹԵՄԱ 2	Մարդ-ընտանիք-համայնք-հասարակություն 4 ժամ							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Սովորողները կգիտակցեն մարդու և հասարակության փոխկապվածությունը,հասարակական մեծ և փոքր խմբերի ու շերտերի նմանություններն ու տարբերությունները:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	Մարդու էությունից բխեցնի խմբի և հասարակության անհրաժեշտությունը: Տարբերակի հասարակության փոքր և մեծ խմբերը: Ներկայացնի հասարակության սոցիալական կազմը: Բացատրի արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը: Բերի օրինակներ «ուրիշի» կարևորության և նրա հետ արդյունավետ հաղորդակցվելու նշանակության մասին: Մեկնաբանի հասարակական միջավայրի դրական և բացասական ազդեցությունը սեփական առողջությանը վերաբերող որոշումների կայացման վրա:							
4	Հասարակական կյանքի առանձնահատ կությունները	Սովորողները կգիտակցեն մարդու և հասարակության փոխկապվածությունը: Մեկնաբանել հասարակական միջավայրի դրական և բացասական ազդեցությունը սեփական առողջությանը վերաբերող որոշումների	Սովորողները գիտակցում են մարդու և հասարակության փոխկապվածությունը: Մեկնաբանում է հասարակական միջավայրի դրական և բացասական ազդեցությունը սեփական առողջությանը վերաբերող որոշումների կայացման վրա:	20-22	1	1		

		կայացման վրա:						
5	Հասարակական կյանքի առանձնահատ կությունները	Սովորողները կգիտակցեն հասարակական մեծ և փոքր խմբերի ու շերտերի նմանություններն ու տարբերությունները:	Ներկայացնում է խմբի և հասարա կության անհրա ժեշտությունը: Ներկայացնում է իրական օրինակներով մարդու և հասա րակության փոխներ գործությունը:	22-25	1	1		
6	Հասարակության սոցիալական կազմը	Գաղափար ունենա հասա-րակության սոցիալական կազմի մասին:	Ներկայացնում է հասարակության սոցիալական կազմը,կարևորի ընտանիք, համայնք, ազգ, պետություն հասկացությունները:	26-29	1	1		
7	Հասարակության սոցիալական կազմը	Բացատրի հասարակության սոցիալական շերտերը և դրանց մեջ մտնող ներկայացուցիչներին: Իմանա սոցիալական հարաբերությունների և գործընթացնեի մասին: Կարողանա ուսումնասիրել և գնահատել սոցիալական ոլորտը և բացահայտել մի շարք սոցիալական հիմնախնդիրներ: Իմանա ինչ է համայնքը:	Բացատրում է հասարակության սոցիալական շերտերը և դրանց մեջ մտնող ներկայացուցիչներին: Գիտի սոցիալական հարաբերությունների և գործընթացնեի մասին: Կարողանում է ուսումնասիրել և գնահատել սոցիալական ոլորտը և բացահայտել մի շարք սոցիալական հիմնախնդիրներ: Գիտի ինչ է համայնքը:	29-33	1	1		
8	**Ամփոփում 2 (բանավոր հարցում)**	Ստուգել սովորողների թույլ և ուժեղ կողմերը և կապ ստեղծել նախորդ թեմաների հետ:	Սովորողները ճանաչում են իրենց ուժեղ և թույլ կողմերը և դրսևորում են ինքնազարգացմանը միտված վարքագիծ:		1		1	
ԹԵՄԱ 3	**Մարդ-մտածողություն,սոցիալական-էմոցիոնալ հմտություններ 5 ժամ**							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	**Սովորողները կհասկանան մտածողության, սոցիալական հմտությունների, հույզերի կարևորությունը մարդու կյանքում և որոշակի օրինակների ու իրավիճակների վերլուծության միջոցով կզարգացնեն ինքնաճանաչողությունը և իրավիճակին համարժեք արձագանքելու հմտությունները:**							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	**Հիմնավորի մտածողության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում: Վերլուծի սեփական հույզերը, մտքերը, թվարկի հույզերի կառավարման հնարները: Կապակցի հույզերը,մտածողությունը և վարքագիծը: Դրսևորի նախասպաշարմունքային, կարծրատիպերին, անցանկալի ազդեցություններին դիմակայելու, կեղծ լուրերը զանազանելու և դրանց համարժեք արձագանքելու հմտություն:**							
9	Ճանաչողություն և վարքագիծ	Սովորողները կբացատրեն ճանաչողության, սոցիալական հմտությունների, հույզերի, վարքագծի, արդյունավետ հաղորդակցման կարևորությունը մարդու կյանքում :Կսահմանեն ճանաչողություն հասկացությունը: Կմեկնաբանեն ճանաչողության և վարքագծի դերը մարդու և հասարակության կյանքում:	Սովորողները բացատրում են ճանաչողության, սոցիալական հմտությունների, հույզերի, վարքագծի, արդյունավետ հաղորդակցման կարևորությունը մարդու կյանքում: Սահմանում է ճանաչողություն հասկացությունը: Մեկնաբանում ճանաչողության և վարքագծի դերը մարդու և հասարակության կյանքում:	34-36	1	1		
10	Ճանաչողություն և վարքագիծ	Որոշակի օրինակների և իրավիճակների վերլուծության միջոցով կզարգացնեն ինքնաճանաչողությունը և իրավիճակին համարժեք արձագանքելու հմտությունները:	Օրինակներով ներկայացնում է ճանաչողության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում:	36-40	1	1		
11	Հույզերի ճանաչում և կառավարում	Վերլուծի սեփական հույզերը,	Նկարագրում է սեփական հույզերը,	41-46	1	1		

		մտքերը, թվարկի հույզերի կառավարման հնարներ: Կապակցի հույզերը, մտածողությունը և վարքագիծը:	մտքերը, թվարկում հույզերի կառավարման հնարներԿապակցում է հույզերը,մտածողությունը և վարքագիծը:					
12	Արդյունավետ հաղորդակցում	Դրսևորի նախապաշարմունքներին, կարծրատիպերին, անցանկալի ազդեցություններին դիմակայելու հմտություն	Դրսևորում է նախապաշարմունքներին, կարծրատիպերին, անցանկալի ազդեցություններին դիմակայելու հմտություն	47-49	1	1		
13	Արդյունավետ հաղորդակցում	Դրսևորի կեղծ լուրերը զանազանելու և դրանց համարժեք արձագանքելու հմտություն: Բացատրի արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը	Դրսևորում է կեղծ լուրերը զանազանելու և դրանց համարժեք արձագանքելու հմտություն: Բացատրում է արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը:	50-55	1	1		
14	***Ամփոփում 3. գրավոր աշխատանք (թեստ)***	Ստուգել աշակերտների ձեռք բերած գիտելիքները:	Վերլուծել արդյունքները		1		1	
ԹԵՄԱ 4	**Մարդ-բարոյականություն 5 ժամ**							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	**Սովորողները կհիմնավորեն բարոյական նորմերի անհրաժեշտությունը, կբացատրեն բարոյագիտության առանցքային հասկացությունները:Կկարողանան դատողություններ անել որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով:**							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	**Հիմնավորի բարոյական նորմերի անհրաժեշտությունը: Սահմանի բարոյականության ոսկե կանոնը: Նկարագրի բարին ու չարը, ազնվությունը և սուտը, պարտքը և խիղճը: Համեմատի և հակադրի էգոիզմն ու ալտրուիզմը,ամոթը և մեղքը: Դատողություններ անի բարոյականության հարցերի մասին և որոշումներ կայացնի:**							
15	Բարոյական նորմերի նշանակությունը:	Սովորողները կհիմնավորեն բարոյական նորմերի անհրաժեշտությունը, կբացատրեն բարոյագիտության առանցքային հասկացությունները:	Հիմնավորում է բարո յական նորմերի անհրա ժեշտությունը: Սահմանում է բարոյական նորմ հասկացությունը:	56-59	1	1		
16	Բարոյականության ոսկե կանոնը	Սովորողները կկարողանան դատողություններ անել որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով: Սահմանի բարոյականության ոսկե կանոնը: Նկարագրի բարին ու չարը, ազնվությունը և սուտը, պարտքը և խիղճը	Սովորողները կարողանում են դատողություններ անել որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով: Սահմանում է բարոյականության ոսկե կանոնը: Նկարագրում՝ բարին ու չարը, ազնվությունը և սուտը, պարտքը և խիղճը	59-61	1	1		
17	Բարոյականության հիմնական հասկացութ յունները	Սովորողները կհիմնավորեն բարոյական նորմեր հասկացությունը, կբացատրեն բարոյագիտության առանցքային հասկացությունները:	Սովորողները հիմնավորում են բարոյական նորմեր հասկացությունը, բացատրում են բարոյագիտության առանցքային հասկացությունները:	62-63	1	1		
18	Էգոիզմ և ալտրուիզմ	Սովորողները կզարգացնեն բարոյականության սկզբունքների վերաբերյալ գիտելիքները սեփական մտածելակերպի և դաստիարակության	Սովորողները զարգացնում են բարոյականության սկզբունքների վերաբերյալ գիտելիքները սեփական մտածելակերպի և դաստիարակության ընկալումների	64-68	1	1		

		ընկալումների շրջանակում: Կհամեմատի և կհակադրի էգոիզմն ու ալտրուիզմը,ամոթը և մեղքը: Կիմանա էգոիզմ և ալտրուիզմ հասկացությունների բացատրությունը:	շրջանակում:Համեմատում է և հակադրում էգոիզմն ու ալտրուիզմը,ամոթը և մեղքը: Գիտի էգոիզմ և ալտրուիզմ հասկացությունների բացատրությունը:					
19	***Ամփոփում 4. (բանավոր հարցում)***	Ամփոփի թեմայից ձեռք բերած գիտելիքները	Ամփոփում և քննարկում է թեմայից ստացած գիտելիքները	66-68	1		1	
ԹԵՄԱ 5	**Մարդ- գեղագիտություն 3 ժամ**							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	**Սովորողները կբնութագրեն գեղեցիկը և տգեղը՝ դրանք դիտարկելով արվեստի, բնության և մարդու համատեքստում:**							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	**Ներկայացնի «գեղեցիկ» և «տգեղ» հասկացությունները: Բնութագրի իրեն շրջապատող իրերի գեղեցկությունը: Մեկնաբանի պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում: Արվեստի գործերից օրինակներ բերի գեղագիտական հիմնական հասկացությունները մեկնաբանելիս:**							
20	Գաղափար գեղեցիկի մասին	Իմանա և գաղափար կազմի գեղեցիկի մասին: Ներկայացնի «գեղեցիկ» և «տգեղ» հասկացությունները	Կարողանում է ներկայացնել «գեղեցիկ» և «տգեղ» հասկա ցությունները: Մեկնաբանում է պա տասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում:	69-73	1	1		
21	Մեզ շրջապատող միջավայրի գեղագի տական ընկալումը	Բնութագրի իրեն շրջապատող իրերի գեղեցկությունը, գեղեցիկը և տգեղը արվեստի, բնության և մարդու համատեքստում: Կարողանա արվեստի գործերից օրինակներ բերել: Մեկնաբանել գեղագիտական հիմնական հասկացությունները:	Բնութագրում է իրեն շրջապատող իրերի գեղեցկությունը, գեղեցիկը և տգեղը արվեստի, բնության և մարդու համատեքստում Կարողանում է արվեստի գործերից օրինակներ բերել: Մեկնաբանել գեղագիտական հիմնական հասկացությունները:	74-75	1	1		
22	Գեղեցիկն արվեստում	Սովորողները կզարգացնեն գեղագիտական ճաշակ ու պատկերավոր խոսք՝ բնութագրելու գեղեցիկն ու տգեղը դրանք դիտարկելով, բնության, հասարակության և մշակույթի համատեքստում: Կարողանա վերլուծել և իր տեսակետները արտահայտել գեղեցիկի մասին և գնահատել նրա կարևորությունը արվեստում:	Սովորողները զարգացնում են գեղագիտական ճաշակ ու պատկերավոր խոսք՝ բնութագրելու գեղեցիկն ու տգեղը դրանք դիտարկելով, բնության, հասարակության և մշակույթի համատեքստում: Կարողանում է վերլուծել և իր տեսակետները արտահայտել գեղեցիկի մասին և գնահատել նրա կարևորությունը արվեստում:	75-78	1	1		
23	***Ամփոփում 5.(բլից հարցեր)***	Կրկնի հինգերորդ բաժնի թեմաները,ամփոփի ձեռք բերած գիտելիքները:	Համեմատի,վերլուծի, քննարկի իրադարձությունները, դեպքերն ու փաստերը:		1		1	
ԹԵՄԱ 6	**Մարդ-իրավունք 3 ժամ**							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	**Սովորողները ձեռք կբերեն մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ գիտելիք՝ գործնական առաջադրանքների միջոցով զարգացնելով դրանց վերաբերյալ վերլուծական հմտություններ ու վերաբերմունք:**							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	**Տարբերի իրավական նորմերը սոցիալական այլ նորմերից: Թվարկի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, մեկնաբանի, թե ինչու են դրանք կոչվում հիմնարար: Սահմանի իրավունք հասկացությունը և օրինակների միջոցով հիմնավորի դրա կարևորությունն: Բացատրի իրավահավասարությունը և ներկայացնի մարդու իրավունքների հիմքում ընկած արժեքները (արժանապատվություն, հավասարություն, անխտրականություն,հանդուրժողականություն/ընդունում, հարգանք, բուլինգ):**							

24	Իրավական և բարոյական նորմեր: Իրավունք	Բացատրել իրավունք և իրավական նորմ,սոցիալական ու բարո յական նորմ հասկացությունները: Սահմանի իրավունք հասկացությունը և օրինակների միջոցով հիմնավորի դրա կարևորությունը: Տարբերակի իրավական և բարոյական նորմերը:	Բացատրում է իրավունք և իրավական նորմ,սոցիալական ու բարո յական նորմ հասկացությունները: Սահմանում է իրավունք հասկացությունը և օրինակների միջոցով հիմնավորի դրա կարևորությունը: Տարբերակում է իրավական և բարոյական նորմերը:	79-82	1	1		
25	Իրավունք, իմաստը, դերը, հասկացութ յունը,բնույթն ու առաջացումը	Սովորողները ձեռք կբերեն մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ գիտելիք՝ գործնական առաջադրանքների միջոցով զարգացնելով դրանց վերաբերյալ վերլուծական հմտություններ և վերաբերմունք:	Սովորողները ձեռք են բերում մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ գիտելիք՝ գործնական առաջադրանքների միջոցով զարգացնելով դրանց վերաբերյալ վերլուծական հմտություններ և վերաբերմունք:	82-86	1	1		
26	Իրավունքի աղբյուրներ	Սովորողները կներկայացնեն իրավունքի աղբյուրները;Կկարողանան ներկայացնել նորմատիվային իրավական ակտ,իրավական սովորույթ,դատական նախադեպ հասկացությունները:	Ներկայացնում են իրավունքրի աղբյուրները;կարողանում են ներկայացնել նորմատիվային իրավական ակտ,իրավական սովորույթ,դատական նախադեպ հասկացությունները:	87-91	1	1		
27	**Ամփոփում 6. (բանավոր հարցում)**	Նախորդ թեմաների գիտելիքի ստուգում	Սովորողները ճանաչում են իրենց ուժեղ և թույլ կողմերը և դրսևորում են ինքնազարգացմանը միտված վարքագիծ:		1		1	
ԹԵՄԱ 7	**Մարդ- տնտեսություն 3ժամ**							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	**Սովորողները կկարողանան իրենց և այլոց կարիքները,ցանկությունները և պահանջմունքները բավարարելու համար համադրել դրանք առկա ռեսուրսների հետ,կկարողանան մեկնաբանել սակավության հիմնախնդիրը:Կնկարագրեն արտադրության, բաշխման և սպառման գործընթացները:Կկարևորեն աշխատանքի, խնայողությունների դերը ներկա և ապագա:Կկազմեն անձնական և ընտանեկան բյուջե:**							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	**Հետևություններ անի՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից: Նկարագրի արտադրության, բաշխման և սպառման գործընթացները: Համադրի անձնական և ընտանեկան եկամուտներն ու ծախսերը, պլանավորի բյուջեն՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը: Բացատրի ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը:**							
28	Պահանջմունքներ,կարիքներ,ցանկություններ	Ներկայացնի մարդու պահանջմունքները, ցանկություններն ու կարիքները:	Ներկայացնում է մարդու պահանջմունքները, ցանկություններն ու կարիքները:	92-96	1	1		
29	Տնտեսական որոշումների կայացում, սակավության հիմնախնդիր	Սովորողները կկարողանան իրենց և այլոց կարիքները, ցանկությունները և պահանջմունքները բավարարելու համար համադրել դրանք առկա ռեսուրսների հետ: Կկարողանա մեկնաբանել սակավության հիմնախնդիրը:	Սովորողները կարողանում են իրենց և այլոց կարիքները, ցանկությունները և պահանջմունքները բավարարելու համար համադրել դրանք առկա ռեսուրսների հետ: Կարողանում են մեկնաբանել սակավության հիմնախնդիրը	97-99	1	1		
30	Արտադրություն,բաշխում,փոխանակում և սպառում: Անձնական բյուջե, եկամտի բաշխում, խնա	Կնկարագրեն արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները:	Նկարագրում են արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները:	100-108	1	1		

	յողություններ ներկայում և ապագայում:	Կնկարագրեն խնայողությունների դերը ներկա և ապագա կյանքում: Ներկայացնի խնայողություններ կատարելու նշանակությունը: Կկազմեն անձնական և ընտանեկան բյուջե:	Նկարագրում են խնայողությունների դերը ներկա և ապագա կյանքում: Ներկայացնում է խնայողություններ կատարելու նշանակությունը: Կազմում են անձնական և ընտանեկան բյուջե:					
31	**Ամփոփում 7.(բանավոր հարցում)**	Կրկնի թեմաները,ամփոփի ձեռք բերած գիտելիքները:	Համեմատի,վերլուծի, քննարկի իրադարձությունները, դեպքերն ու փաստերը:		1		1	
ԹԵՄԱ 8	**Մարդ-քաղաքականություն 2 ժամ**							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	**Սովորողը կկարողանա մեկնաբանել քաղաքականությունը հասարակական հարաբերություններում և անհատի կյանքում, օրինակների միջոցով ցույց տալ մարդու դերը քաղաքականության մեջ:**							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	**Հիմնավորի քաղաքականության կարևորության կարևորությունը մարդու կյանքում: Ցույց տա քաղաքականության և հասարակական կյանքի այլ ոլորտների փոխադարձ կապերը:**							
32	Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում	Բացատրել, թե ինչ է քաղաքականու թյունը: Կկարողանան ներկայացնել քաղաքականություն հասկացությունը: Օրինակներով կներկայացնի քաղաքականության ազդեցությունը անհատի և հասարակության վրա:	Բացատրում է, թե ինչ է քաղաքականու թյունը Կարողանում է ներկայացնել քաղաքականություն հասկացությունը: Օրինակներով ներկայացնում է քաղաքականության ազդեցությունը անհատի և հասարակության վրա:	109-113	1	1		
33	Մարդը որպես քաղաքական էակ	Սովորողները կկարողանան մեկնաբանել քաղաքականության նշանակությունը հասարական հարաբերություններում և անհատի կյանքում , օրինակների միջոցով ցույց տալ մարդու դերը քաղաքականության մեջ:	Կարողանում են մեկնաբանել քաղաքականության նշանակությունը հասարական հարաբերություններում և անհատի կյանքում , օրինակների միջոցով ցույց են տալիս մարդու դերը քաղաքականության մեջ:	114-118	1	1		
34	**Ամփոփում 8. գրավոր աշխատանք (թեստ)**	Ստուգել աշակերտների ձեռք բերած գիտելիքները:	Վերլուծել արդյունքները		1		1	
				ԸՆԴԱՄԵՆԸ	***34***	***26***	***8***	